Կազմեց՝ Գր. Միւնի

# ՄԵՐ



# ԵՐԳԵՐ

891.99-192
Կ-93

Գ
2013
JAN 2009

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ԵՐԿԻՐՆԵՐԻ, ՄԻԱՑԷ՛Ք

122058

# ՆՈՐ ԿԵԱՆՔԻ ԵՐԳԵՐ

կազմեց

ԳՐԻԳՈՐ ՍԻԻՆԻ

8 - - 2003

Բանիրատ Թիւ 3
ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՍԷԿՏՈՐ

Նիւ Եորք, 1934 թ.

ՆՈՒԷՐ

ԳԱՂՈՒԹԱՀԱՅ ՄԱՐՏՆՉՈՂ ԱՇԽԱՏԱՒՈՐՈՒԹԵԱՆ

308-95

# ՅԱՌԱՋԱԲԱՆ

Նոր կեանքի երգեր ունենալու բաղձանքներու կապակցութեամբ Ձեր ըրած անվերջ դիմումներուն Բանհրատի երաժշտական սեկտորը կը պատասխանէ սոյն ծոցի երգարանը հրապարակ հանելով, առանց ոեւէ խօսք ասելու հասկանալի այն հսկա դժւարութիւններու մասին, որոնցմով զուգորդւած էր անոր լոյս ընծայելը:

Երգարանիս մէջ զետեղւած են երեսունեւեօթը (29–ը՝ նոր կեանքի եւ 8–ը՝ հին գեղջկական) ձայնագրեալ երգեր, որոնցմէ տաս եւ մէկը (No. 3, 15, 16, 17, 18, 23, 30, 31, 32, 33, 34, «6, 37) են միաժամանակ եւ քառաձայն խառն խմբերու համար:

Ընկերներուն, որոնց մեծ մասը գործաւորկ է, դիւրամատչելի դնել նոր կեանքի երգեր հայթայթելու մտահոգութիւնն ու ջանքերը, ինչպէս եւ մեր նիւթական միջոցներու բացարձակ չգոյութիւնը ստիպել է մեզ հրատարակչական ծախսերը կրկնակի, եռակի զեղչելու պարտաւորութեամբ ձայնագրեալ երգերէն շատեր սեղմումներու՝ խտացման ենթարկել (2 երգը միացնել, 2 երեսնոցը 1 երեսի մէջ տեղաւորել, քառաձայներու ամեն մի տողի 4 կամ 6 հնգագծերը այնպէս սեղմել 2 հնգագծի մէջ, որ ներկայացնէ թէ չորս ձայնի եւ թէ դաշնակի բաժինները եւ այլն եւայլն), ինչպէս եւ կլիշէները (քլըթերը) հանել ուղղակի հեղինակի ֆաքսիմիլիաներէն (ինքնաձեռագրերէն, որով ի հարկէ տուժել է հրատարակութեան արտաքին ձեւաւորման վայելչութիւնը:

Վերջացնելով մեր խօսքը, նշենք, որ ներկայումս յեղափոխական արւեստը, չի բաւականալով կեանքի լոկ արտացոլացումով, կ'ընդունի յեղափոխական երգի խոշոր ու ներգործօն ազդեցութիւնը մասսաներու կեանքին վրա: Ուրեմն գիտակցելով թէ այս երգերը իրենց կարճ ու կտրուկ՝ անմիջականօրէն ազդելու բնոյթով որպիսի՛ հսկա ներգործօն դեր ունին կատարելիք զանգւածներու յեղափոխականացման, դասակարգային շարժման՝ մեր անողոք պայքարի, արիւնոտ կռւի ու նւաճումներու մէջ անոնց ակտիվ մասնակցութիւնը գործնականապէս ապահովելու տեսակէտէն, աւելացնենք, որ սեկտորս սոյն տեսակէտներով որքան էլ օգտակար կը գտնէ նոր կեանքի երգերու այս տետրակի լոյս ընծայելը, այնու ամենայնիւ կը ցաւի, որ իրմէ միանգամայն անկախ պատճառներով անկարող եղաւ ընկերներու բաղձանքները լայն չափերով եւ աւելի ներկայանալի ձեւով իրագործելու:

Բանհրատի Երաժշ. Սեկտորի Վարիչ
ԳՐ. ՍԻՒՆԻ

# ՆՈՐ ԿԵԱՆՔԻ ԵՐԳԵՐ

## ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ՇԱՐՔԱՅԻՆ


| No. | | | էջ |
|---|---|---|---|
| 1. | *a.* Ինտերնացիոնալ | Պ. ԴԵԳԵՅՏԻ | 2 |
| | *b.* Իրար Պինդ Փարւենք | ԳՐ. ՍԻՒՆԻԻ | |
| 2. | Գոռ Մրրիկներ | Մշակում Ռ. ՄԵԼԻՔԵԱՆԻ | 5 |
| 3. | Դու Ջոհ Գնացիր | Դաշնաւորում ԳՐ. ՍԻՒՆԻԻ | 8 |
| 4. | Շաչիւն ու Պայթիւն | | 10 |
| 5. | Երիտ Գվարդիա | | 11 |
| 6. | Դէպի Մարտ | | 12 |
| 7. | Մուրճերի Զարկերով | | 13 |
| 8. | Երիտ Կոմմունիստներ Ենք | | 14 |
| 9. | Կոմինտերն | Գ. ԷՍԼԵՐԻ | 16 |
| 10. | Զինւոր | Ա. ՏԷՐ ՂԵՒՈՆԴԵԱՆԻ | 18 |
| 11. | Սուրը Կտրուկ | | 20 |
| 12. | Մենք Դարբիններ | Մշակում Ռ. ՄԵԼԻՔԵԱՆԻ | 21 |
| 13. | Է՛յ Մարտիկներ | Մշակում Ռ. ՄԵԼԻՔԵԱՆԻ | 23 |
| 14. | Հանքերում | Ա. ՏԷՐ ՂԵՒՈՆԴԵԱՆԻ | 24 |
| 15. | Անվախ Ընկեր | Մշակում ԳՐ. ՍԻՒՆԻԻ | 25 |
| 16. | Բռաւօ Բանւոր | Գործ ԳՐ. ՍԻՒՆԻԻ | 26 |
| 17. | Հէ՛յ Բանւոր | Գործ ԳՐ. ՍԻՒՆԻԻ | 27 |
| 18. | Քարտաշ | Եղանակ Տ. ԱՒԵՏԻՍԵԱՆԻ<br>Բազմաձայն ԳՐ. ՍԻՒՆԻԻ | 28 |
| 19. | Մարշ Հնգամեակի | ԿԱՐՕ ԶԱՔԱՐԵԱՆԻ | 29 |
| 20. | Կարբիդի Երգ | Ս. ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆԻ | 30 |


## ԿԵՆՑԱՂԱՅԻՆ


| | | | |
|---|---|---|---|
| 21. | Մեր Սարերը | ԳՐ. ՍԻՒՆԻԻ | 31 |
| 22. | Մեր Բամբակի Արտերը | Մ. ՄԱԶՄԱՆԵԱՆԻ | 32 |
| 23. | Հունձք | Գործ ԳՐ. ՍԻՒՆԻԻ | 34 |
| 24. | Աղջի, Արի | Գործ ԳՐ. ՍԻՒՆԻԻ | 35 |
| 25. | Ջան Ազրբայջան | Ա. ՏԷՐ ՂԵՒՈՆԴԵԱՆԻ | 36 |




## ՊԻՈՆԵՐԱԿԱՆ


| | | | |
|---|---|---|---|
| 26. | Մենք Ունենք Դրօշ | Մ. ԿՐԱՍԵՎԻ | 39 |
| 27. | Խիզախ Մենք Զինւորներ | Ս. ԵԿԵԱԶԿՈՅԻ | 41 |
| 28. | Հոկտեմբերիկներ | Մ. ՌԱՈՒԽՎԵՐԳԵՐԻ | 43 |
| 29. | Կարմիր Զինւոր | ԳՐ. ՍԻՒՆԻԻ | 44 |


## ԳԵՂՋԿԱԿԱՆ


| | | | |
|---|---|---|---|
| 30. | Մանած Թիլըս | Մշակում ԳՐ. ՍԻՒՆԻԻ | 46 |
| 31. | Ձեմ, Ձեմ | Մշակում ԳՐ. ՍԻՒՆԻԻ | 48 |
| 32. | Քեռին Եկաւ (մանկական) | ԳՐ. ՍԻՒՆԻԻ | 50 |
| 33. | Ցորեն Եմ Ցաներ | Մշակում ԳՐ. ՍԻՒՆԻԻ<br>եւ Ց. ՍԱՄՈՒԷԼԵԱՆԻ | 50 |
| 34. | Շողեր Ջան | Մշակում ԳՐ. ՍԻՒՆԻԻ | 51 |
| 35. | Օ՛յ Նազանըմ | Մշակում ԳՐ. ՍԻՒՆԻԻ | 52 |
| 36. | Կեանքն Անուշ | Մշակում ԳՐ. ՍԻՒՆԻԻ | 54 |
| 37. | Ինչու Բինգեօլը Մտար | Մշակում ԳՐ. ՍԻՒՆԻԻ | 57 |

# ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼ

Թարգմ. Ն. ՉԱՐԵՆՑ

Սա՛ է վերջին կռիւը եւ պայքարը մեր մեծ,
Ելի՛ր, ում կեանքը անիծել է,
Ով ճորտ է, մերկ է եւ սոված,
Արդէն վառւում են մեր սրտերը,
Արդէն կուռ ենք մենք ձրգտում,
Այս հին աշխարհը կփորենք մենք,
Մինչեւ հիմքերը — եւ յետո
Մեր նոր աշխարհը կը շինենք մենք,
Ուր ո՛չ սոված կա ո՛չ դըժգոհ:

Սա՛ է վերջին կռիւը եւ պայքարը մեր մեծ,
Ինտերնացիոնալը աշխարհը կը փրկէ:

Ոչ ոք չի տա մեր փրկութիւնը,
Ո՛չ խենթ հերոսը, ո՛չ արքան.
Մենք պէտք է մեր ազատութիւն
Կռենք ձեռքով մեր սեփական:
Որպէսզի չո՛ւտ փըշրենք մեր լուծը
Եւ յետ խլենք ողջ հողը մեր.
Խըփենք մուրճերը, տանք մեր ուժը,
Քանի երկաթը տաք է դեռ —

Սա՛ է վերջին կռիւը եւ պայքարը մեր մեծ,
Ինտերնացիոնալը աշխարհը կը փրկէ:

Լոկ մե՛նք, ճորտեր ու բանւորներս
Ունենք անխափան մի իրաւունք
Ասել, որ հողը մե՛րն է, մե՛րն է —
Կորչի՛, հարուստը թող սըրըսուկ:
Եւ երբ պայթի մեծ փոթորիկը
Եւ կուշտ շըները չըքանան —
Նորից երկիրը եւ երկինքը
Մերն են ու մերը կը մընան:

Սա՛ է վերջին կռիւը եւ պյքարը մեր մեծ,
Ինտերնացիոնալը աշխարհը կը փրկէ:



# ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼ




*Դաշնակի սոյն նուագցուբեամբ կ'երգւին թէ առանձին և թէ միասնաբար „Ինտերնացիոնալն" ու „Իրար պինդ փարուենքը",



PASSANTINO BRAND
*12 Lines — Octavo N° 5*





# ԳՈՌ ՄՐՐԻԿՆԵՐԸ

Գոռ մրրիկները ոռնում ու շաչում են,
Սեւ մութ ուժերը մեզ ժանտ ճընշում,
Գոռ պայքարի մենք ելանք թըշնամու դէմ,
Գոռ պայքարի ելանք մենք համարձակ:

Եւ կը պարզենք մենք մեր վեհ ալ դրօշը,
Դրօշը կարմիր՝ մարտընչող բանւորի,
Դրօշը կարմիր՝ մասսայի պայքարի գոռ,
Դրօշը մեր վառ ու ազատ գարունքի:

Դէպ անողո՛ք մարտ,
Դէպ կատաղի՛ մարտ,
Մա՛րշ, մա՛րշ, յառա՛ջ բանւոր դասակարգ:

Գահ ու թագին ցարերի նզովք ու գարշանք,
Շըղթայով կաշկանդ մասսային յարգանք,
Մեր արիւնով շաղախուած է՛ւ թագ է՛ւ գահ
Գարշ ոսոխի արիւնով կո՛ղողենք—

Եւ կը պարզենք մենք մեր ալ դրօշը,
Դրօշը կարմիր՝ մարտընչող բանւորի,
Դրօշը կարմիր՝ մասսայի պայքարի գոռ
Դրօշը մեր վառ ու ազատ գարունքի:

Դէպ անողո՛ք մարտ,
Դէպ կատաղի՛ մարտ
Մա՛րշ, մա՛րշ, յառա՛ջ բանւոր դասակարգ:

2.

Հաստ, մարշանման

Մշակեց Ռ. Մելիքեան.








# ԴՈՒ ԶՈՀ ԳՆԱՑԻՐ

## Մ. ԱՂԱԵԱՆ

Դու զոհ գնացիր
կատաղի պայքարում
Ընդդէմ բռնակալ արիւնոտ աշխարհի.
Եղար աննկուն
դու ցարի բանտերում,
Տարար բռնութիւն ու տանջանք աքսորում:

Ստրուկ կարգերին
պատերազմ յայտնեցիր,
Բանւոր–գիւղացուն մեծ խորհուրդը տուիր,
Արծիւ կոմմունար,
դո՛ւ Վլատիմիր Իլ՛իչ,
Ընկեր, ղեկավար, դու մեր Մեծ ուսուցիչ:

Հիւսիս ու հարաւ,
արեւելք, արեւմուտք
Տեսար բարձունքներն ազատ մարդկութեան
Ճնշուած ազգերին
դու տուիր մի նոր կեանք,
Բացիր ճանապարհ հզօր Միութեան:

Եւ մենք կընթանանք
քո գծած ուղիով
Անվախ, աներկիւղ, համարձակ, անսասան,
Մեռար դու, բայց քո
գաղափարը անմահ
Ապրում է մեր մէջ եւ կապրի յաւիտեան:



## 3. ԴՈՒ ԶՈՀ ԳՆԱՑԻՐ



4.

## ՇԱՉԻՒՆ ԵՒ ՊԱՅԹԻՒՆ




Ելաւ մեր առջեւ գեներալը դաժան,
Կարդաց նա գաղիր իր հրամանը —
«Զարդուած ու պարտուած էք՝ մահին էք արժան:
«Փորէ՛ք դէ հիմա ձեր դամբանը»:

Եւ մենք փորեցինք բահերովն ժանգոտ,
Մայր հողըն ահա խոր ճեղքել ենք,
Կանգնած ենք, սպասում ենք, ձայնում ենք ցասկոտ.—
«Դէ չո՛ւտ կրակեցէք, մենք պատրաստ ենք»:

Դահիճ գեներալը խընդաց ինքնագոհ.
«Ձեր իղձն արդէն կատարւում է.
«Դուք հող էք տենչել միշտ, ահա ձեզ եւ հող.
«Իսկ «կեանքըն ազատ»՝ երկընքումն է»:

— «Ծաղրո՞ւմ ես, լըպիրշ, դահիճ ու դաղան,
Անվրէժ չի մընա մեր արիւնը.
Եւ թող մահանանք մենք,— կապրի յաւիտեան
Ազատ աշխատանքն ու կոմմունան:

— «Իսկ դուք չարէչար եղբայրներ անգիտակ,
Ինչո՞ւ են դողում ձեր զէնքերը,
Թէկուզ եւ մեռնենք մենք ձեր հուր-կրակի տակ,
Բայց չեն նըզովի մեր շուրթերը:

— «Նըշանն չէշտակի՛, կրակեցէք դուք անահ,
Անհետ թող ցընդի մեր աճիւնը.
Կեցցէն Խորհուրդները՝ փարոս լուսարձակ,
Գալիք վառ կեանքին մեր ողջոյնը:



5.




## ԵՐԻՏ ԳՎԱՐԴԻԱ

Մատաղ կեանքի փորձով գիտեն
Ծորտի լուծ-աշխատանք,
Մանկուց տարել կըրել ենք
Սարուկի տանջանք ու կապանք.

Մեր վէս հոգին ճընշել է միշտ,
Խաւար կեանքի շըղթան ու վիշտ,
Երիտ մենք գվարդիա բան-գեղջկի,
Յառաջ, օ՜ն, չեշտակի:

Կանգնած քուրա-բովի մօտ
Քըրտինք թափենք ծոր-ծոր,
Տանջւել ենք մենք, ճարպոտ
Հարուստն ապրի անգորր.

Եւ փորձըն այդ դըժւար, սաստիկ
Մեզնից կոփից հըզօր մարտիկ.
Երիտ մենք գվարդիա բան-գեղջկի,
Յառաջ, օ՜ն, չեշտակի:

## ԴԷՊԻ ՄԱՐՏ ԴԻՄԵՆՔ

Դէպի մարտ դիմենք սրրտով անվեհեր,
Մեծ գործին զոհենք մեր կեանքը·
Բարիկադ ելէ՛ք, բոլոր ճրնշըւածներ,
Ազատենք գերուած աշխատանքը:

Հաւաքենք խիզախ կամքով աներեր,
Ոսոխին մեր որ դաժան, նենգ է,
Բարիկադ ելէ՛ք, բոլոր ճրնշըւածներ,
Ազատենք գերուած աշխատանքը:

Է՜յ, ցաւեր, ցաւի անմա՛րդ ծառաներ,
Զուր են ձեր դաւերն ու ջանքը,
Բարիկադ ելէ՛ք, բոլոր ճրնշըւածներ,
Ազատենք գերուած աշխատանքը:

Դէպի մարտ դիմենք սրրտով անվեհեր
Մեր գործին զոհենք մեր կեանքը·
Բարիկադ ելէ՛ք, բոլոր ճրնշըւածներ,
Ազատենք գերուած աշխատանքը:

6·

Զափաւոր.






7·

## ՄՈՒՐՃԵՐԻ ԶԱՐԿԵՐՈՎ

Առոյգ




PASSANTINO BRAND
12 Lines – Octavo №5

Թըշնամու դէմ հուժկու յորձանքով
Մենք յորդում ենք արար աշխարհքով
Բեւեռից մինչեւ բեւեռն է թնդում
Մեր ցասկոտահեղ ձայնը հնչում:

Հօ՛ւր ջահեր, բոց, կրակ ենք ժայթքում,
Որ խանձէ կապիտալն արնախում:
Մարտն ահեղ, մարտն վերջին՝ վճռական
— Նա ցընցեց երկրագունդը համայն:

Մեր չորս դին դղըրդիւն ու թընդիւն —
Գահ ու թագ տապալուած ցիրուցան…
Խորտակիչ են զարկերն մուրճերի,
Զարկն ահեղ կոմմունար բանուորի:

8.

## ԵՐԻՏ ԿՈՄՈՒՆԻՍՏՆԵՐ ԵՆՔ




Երիտ կոմմունիստներ ենք մենք
Յաջորդ սւսդ ընկերներին,
Մեր գիտութիւնն, գործն ու ուժը
Կրտանք ազատ աշխատանքին,
Անսասան դէպ բարիկադը...

Մանգաղն ու մուրճը՝ մեր փարոսն է,
Սուր ու ուժն՝ մեզ հենադանդ.
Բանւորի դատը՝ մեր օրէնքն է,
Դատն պաշտպանելը՝ մեր աւանդ:
Անսասան դէպ բարիկադը...



15.

## ԿՈՄԻՆՏԵՐՆ

Երաժշտ. Գ. ԷՍԼԵՐԻ

Ելէ՛ք, գործարաններ,
Սեղմենք մեր կուռ շարքեր,
Քալենք դէպ ահեղ մարտ,
Դէպ մարտ, դուք միշտ անպարտ:
Սուրգէք հրացանները, առէք ճիշտ նշան,
Առաջ, պրոլետարներ, դէպ մարտ անսասան:
Դէպ մարտ անսասան,
Դէպ մարտ անսասան:

Խոնաւ մութ բանտերում
Տանջւող բիւր ընկերներ,
Մենք ձեզ ենք սպասում
Ու հաշւում մեր շարքերում:
Սպիտակ տերորին հարւածենք աներկիւղ,
Ովքէ են կանգնել թէ քաղաք եւ թէ գիւղ,
Խարոյկի ենք խարկել,
Վառել, բորբոքել:

Կոմինտերնի կանչին
Պողպատէ շարքերով,
Պաշտպան Սովետների
Ելնենք կարմիր դրօշով:
Պատրաստ ենք մարտի, մենք պատրաստ ենք կանչի,
Երբէք ճակատը չենք մատնի նահանջի,
Պատրաստ ենք կանչի,
Մենք չենք նահանջի:

Լենինիզմն է սփռում
Լոյս մեր ճանապարհին,
Ու մահ է սպառնում
Կապիտալի աշխարհին:
Բանւոր դասակարգը կռւում է յամառ
Համաշխարհային մեծ Սովետի համար:
Համաշխարհային
Սովետի համար:

ԾԱՆՕԹ.— Կրկնել առաջին տունը:

## 9.
# ԿՈՄԻՆՏԵՐՆ

Երաժշտությունը Գ. ԷՅՍԼԵՐԻ









122058

## 10.
# ՋԻՆԻՈՐ

Խոսք Դ. Մահարու.
Слова Маари.
Перевод Д. Усова

Երաժշտություն Ա. ՏԵՐ-ՂԵՎՈՆԴՅԱՆԻ op.16 №1.
Музыка А. ТЕР-ГЕВОНДЯНА









Москва Главлит №А-62582 Тир 500 экз    м. 1148 г.    Нотопечатня Гиза К...пачн 13

11.

# ՍՈՒՐԸ ԿՏՐՈՒԿ

Մարշանման.




Ֆրանս ու բրիտան եղբայրները զինուոր
Մեր հարազատն են գեղջուկ—բանուոր,
Լայն դաշտերից մինչ ծովեր...

Չինն ու հնդիկը ստրուկ ու ճընշուած
Մեզ են նայում յոյսերով խանդավառ,
Լայն դաշտերից մինչ ծովեր եւայլն

Աշխատաւոր մարդկութեան ենք պաշտպան,
Ո՞վ պիտի դուրս գա մեր դէմ—յանդիման:
Լայ նդաշտերից մինչ ծովեր...



12.

# ՄԵՆՔ ԴԱՐԲԻՆՆԵՐ

Թափով — Մշակեց Ռ. Մելիքեան.




Բանուոր երկրի
Մենք դարբիններ ենք,
Նրա բարիքն ենք մենք կերտում,
Զուր չեն շարժւում մեր
Զըլոտ թեւերը,
Պողպատ սալին զուր չենք զարկում:

Մուրճերը մեր
Հուր են ժայթեցնում,
Դար-դարերի շղթան փշրում,
Ողջ երկրագունդը
Տե՛ս արթնանում է,
Ոտքի ելնում եւ մարտ տենչում:

Մենք նոր կեանքի
Դարբնում ենք բախտը
Արդար վաստակ ենք մենք կոփում,
Ազատութիւն է
մեր վառ բաղձանքը,
Հենց նրա համար ենք մարտ տենչում:

## Է՛Յ ՄԱՐՏԻԿՆԵՐ

Է՛յ մարտիկներ դուք, է՛յ տիտաններ դուք․
Ռազմի չեփորն է գիլ չեփորում,
Դէպ բարիկադը, դէպ բարիկադը,
Մեր արդար դատն է գրոհի կանչում։

Ծանըր-մուրճ, ծանըր մուրճ
Քո հարւածը հուր-հրաշունչ․
Թափ աւիւն մեր ոլորտում
Ե՛լ բանւոր, դու հըզօր
Ե՛լ կըռւի, ամեհի։

Փառք Իլ՛իչին մեր, կեցցէ կոմմո՛ւնան․
Կործի կապանքըն, աքսոր ու բանտ,
Դէպ բարիկադը, դէպ բարիկադը,
Մեր ոխն անհուն է՝ որոտ ու շանթ։
Ծանըր մուրճ, ծանըր մուրճ...

Արնանըման է կարմիր ալ դրօշը,
Հրեղէն գուշակն է լոյս գալիքի,
Դէպ բարիկադը, դէպ բարիկադը,
Ջարդենք կապանքը կապիտալի։
Ծանըր մուրճ, ծանըր մուրճ...

Հազար ու բիւր ենք, շարքերով կուռ ենք,
Պոռթկում, յորդում ենք հեղեղ-յորձանք,
Դէպ բարիկադը, դէպ բարիկադը,
Կործի խաւարը, կեցցէ նոր կեանք։
Ծանըր մուրճ, ծանըր մուրճ...

13.

Մարշի նման

Մշակեց Ռ. Մէլիքեան.













# 14· ՀԱՆՔԵՐՈՒՄ

Խոսք. Սողոմոն Վեզիրյանի  Երաժ. Ա. Տեր-Ղևոնդյանի




Եկել են օրերը տեմպոտ,
Օրերը թափի ու կամքի,
Մտել են հանքերը մրոտ,
Ու հնչում՝ զարկե՛ր-զարկե՛ր:

Ու որքան թափով զարկենք,
Քրտինքը յորդառատ հոսի,
Այնքան համարձակ կերգենք՝
Հնգամյա պլանի մասին:

Դե՛, զարկենք, էնտուզիաստ ընկեր,
Սուզվենք հանքերը խորունկ,
Թող քրտնեն բրոնզե դեմքեր,
Թող չարժվեն մկանները պիրկ:

# ԱՆՎԱԽ ԸՆԿԵՐ

**Tempo di Marcia** Մշակեց Գր. Սիւնի.



Ան - վա...խ ըն-կեր, դի-մենք շար-շա...........ր, կըռ-ւու....մ հո-գով ամ-րա-
Օր - րա - նը մեր սև տա-ռա-պա.........նք, Մեր մե....ծ ծը-նողն աշ-խա-
Շըղ- թա - յա-կապ մենք տանջւե-ցի.........նք, եւ շա...տ զըր-կանք կը-րե-
Հա- սե...լ է ժամ մեր մեծ դա-տի, Դէ-պի պայ-քար, դէ-պի
Հուժ-կու բազ-կով դէ-պի ուրս նե-տե.........նք Ա - նար...գ սև լուծ բըռ-նու-



նա.................նք, Ա - զա-տու-թեա....ն վեհ ճա-նա-պարհ հար-
տա.................նք, „Աշ-խա-տան-քի ա - զա-տու-թիւն" լի-
ցի.................նք, ժանդ, բիրտ օ-րե......ն ա - հա ան-ցա..ն հա-
մա.................րտ, Չենք վա-խե-ցե......լ, չէնք էլ վա-խի Սև
թեա.................ն, Եւ մայր հո-ղի կըրծ-քին մե-խենք Մեր



թե...նք կըրծ-քով մեզ հա- մա...........ր: մա.........ր:
նի թող մեր դա-ւա- նա.........նք: նա.........նք:
սե....լ է ժամ հա-տուց-մա.........ն: մա.........ն:
մու...թու-թից բիրտ, տը- մա.........րդ: մա.........րդ:
ալ դրօշնա— զա-տու-թեա.........ն: թեա.........ն:



# 16. ԲՌԱՒՈ ԲԱՆՒՈՐ

**Tempo di Marcia** M.M. ♩=144. Խօսք և երաժշտ. Գր. Սիւնիի.











Հին կարգերն ենք մենք քանդում, տեղը նորը նոր կերտում,
Մեծ եռանդ, ույժ գործ դընում, սոցիալիզմ ենք մենք շինում:
Բռաւո, բռաւո, Հէ՛յ բանւոր
Բռաւոր եռանդիդ, բռաւո հարւածիդ,
Բռաւո էդ մեծ սոցգործիդ:
Մենք կեանքին կուտանք նոր ձեւ՝ յաղթ վերելք, հուժկու թափ թեւ,
վերսըլաց միտք, վառ արեւ — հանրավար կեանքի պարգեւ:
Բռաւո, բռաւո, հէ՛յ բանւոր... հայյն՛

## 17. „ՀԵ՛Յ ԲԱՆԻՈՐ

Tempo di Marcia M.M. ♩=100. Խօսք և երաժշտ. Գր. Միւնիի.



Զա՛րկ, զա՛րկ, զարկ փըշրիր ժանդ շըղթաներ՝ սեւ այս կարգեր,
Սըփռիր քո յաղթը, հիմնիր նոր կարգը,
Որ ծաղկի նոր կեանքը՝ պատմութեան մեծ փառքը:

Փառք Մարքս–Էնգելսին, մեծ Լենինին, քաջ Ստալինին,
Կեցցէ Կոմկուսը՝ Մարտի խրախոյսը,
Վառ արեւ մեր յոյսը, աշխարհի շողլոյսը:



## 18.

Խօսք Յ. Յովհաննիսեանի
Եղանակ Տ. Աւետիսեանի

Բազմաձայնեց Գր. Միւնի.



Ես քարտաշ եմ, քար եմ տաշում խորհրդային մեր երկրում,
Սոցիալիզմի քար եմ տաշում խորհրդային մեր երկրում:
Իմ տաշած քար ժեռ լեռ քար է, չի փըշըրւի նա երբեք.
Սոցիալիզմի հիմքն եմ դընում, չի քանդւելու նա երբեք;

## 19.
# ՄԱՐՇ ՀՆԳԱՄԵԱԿԻ

Խօսք՝ ԱԼԱԶԱՆԻ — Երաժշտ. ԿԱՐՕ ԶԱՔԱՐԵԱՆԻ

*Քայլերգի տեմպով*



Առա՛ջ, առա՛ջ, առա՛ջ, յաղթող բանակ, առաջ,
Ճախրուն, անկանգ առա՛ջ, առա՛ջ,
Ելնենք գրոհի, առա՛ջ.
Մարտի ելնենք, գրոհի ելնենք,
Ծառս ելնենք, ելնենք:

Առա՛ջ, առա՛ջ, առա՛ջ, յետեւ նետենք դարը
Նոր դար կերտենք, նոր կեանք:
Առա՛ջ, առա՛ջ, դունդ առ դունդ, Գնանք մարտի երկաթակուռ
Ծառս առա՛ջ, առա՛ջ:



## 20.
# ԿԱՐԲԻՏԻ ԵՐԳ

Խօսք՝ ԱԼԱԶԱՆԻ — Երաժշտ. Ս. ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆԻ

**Moderato**



Որքան հուրեր, որքան վիժանուտ
Վարսեր կրակի–օդը ալիքող:
Այդ արե՞ւն է արդեօք այդպէս թեժանում
Իր ծիրանայանդ ու տոկուն ե՛րգով:

Թէ՞ բարբառում է այնտեղ շառաչուն—
Աշխատանքային մեր երկրի սիրտը:
Մարմնաւորւում է այնպէս յորդահուն
Երկաթուորուող երգերն ու խինդը:

Որքան հիւրեր, որքան վիժանուտ
Վարսեր կրակի–օդը ալիքող,
— Սոցիալիստական հուրն է թեժանում
Եւ յաղթանակում երկաթէ երգով:

## 21· ՄԵՐ ՍԱՐԵՐԸ

M.M ♩=126.

Խոսք և երաժշտ. Գ. Սիմինի.





## 22· ՄԵՐ ԲԱՄԲԱԿԻ ԱՐՏԵՐԸ

Խոսք՝ Ա. ՇԱՅԲՈՆԻ

Երաժշտ. ՄԱՐՏ. ՄԱԶՄԱՆՅԱՆԻ

Allegretto





Մեր բամբակի, մեր բամբակի արտերը,
Թեւ են առել, բաց են եղել վարդերը...
Տօնական են մեր դաշտերը բամբակի,
Վերջին հարուած կհասցնենք կուլակին:

Մեր արտերի, մեր արտերի լայնութեամբ
Կեանք է առնում աշխարհը մեր հոյակապ.
Հէ՜յ ջան, հէ՜յ ջան, այս օրերի խնդութեամբ
Մենք կերտում ենք ողջ աշխարհի ապագան:

Թող գա յոյսով, թող գա լոյսով բամբակը
Մեր աշխարհի արեւավառ երգերով
Մենք թշնամու սրտին կը տանք գնդակը
Բանւորական մեր ամրակուռ ձեռքերով:



23. ՀՈՒՆՁՔ

խօսք և երաժշտ. Գր. Սիմիի

M.M. ♩. = 120.



Ձէթ ճըրագի տեղ լեկտրիկ, Մաս փափուճի տեղ կօշիկ,
Ջոր հացի տեղ տաք խորտիկ, մենք ապրում ենք երջանիկ,
Սովխոզները չեն մընան, կոլխոզները լեն մընան,
Էս ամենը թող տեսնան, որ համփէթը բոլ տընքան:
Թրակտոր, դու խամ հողն հերկէ, սեպարատոր սերմ զըտէ,
Ունգիբատոր ձագ հանէ, որ համփան հերսից ճաթէ.
Սովխոզները չեն մընան... Եւայլն:

Ա.Ա.♩=104. 24. ԱՂՋԻ ԱՐԻ

խօսք ու երաժշտ. Գր. Սիւնիի.




Աղջի, արի սիրտըդ տուր բոյ ու բուսով էն տղին, ճազ ու թիզով էն տղին, աչք ու ունքով էն տղին,
Հողեմ ես էն խաս տըղին, պարապ սարապ էն տղին, միտքը խարար էն տղին, ծոյլ ու քընափ էն տղին:



25.
# ՋԱՆ ԱԶՐԲԱՅՃԱՆ

Խոսք Ա. Վշտունի.
Turqçe sozleri A.Solakjan.
Русск. текст Г. Крейтана.

Երաժշտություն Ա. ՏԵՐ-ՂԵՎՈՆԴՅԱՆԻ
Musiki A. TER-GEVONDJAN op.16. № 3.
Музыка А. ТЕР-ГЕВОНДЯНА






Главлит № А-60521. Тир. 1000 экз. Кл. 1155 1-я Образцовая тип. Гиза Москва. Валовая 28.



# ՄԵՆՔ ՈՒՆԵՆՔ ԴՐՈՇ

Մենք ունենք դրոշ ալ-կարմիր
Ջառ ու վառ պայծառ է,
Նա՛ թող բռնի, ով որ ժիր,
Ով սրտով կայտառ է.

Ով սրտով կայտառ է:
Ջա՛ն ա՛յ, ջա՛ն ա՛յ,

Նա թող լինի թմբկահար
Ով ճարպիկ, խի՛զախ է,
Թո՛ղ թմբուկը զարկի յար
Դե՛ մա՛րշ, ով անվախ է.

Ջա՛ն ա՛յ, ջա՛ն ա՛յ,
Դե՛ մարշ, ով անվախ է:

Ով թախծին օտար է խորթ
Կուրծք ունի մարզված, լայն,
Նա թող լինի առաջնորդ
Զիլ հնչի թող նրա ձայն.

Ջա՛ն ա՛յ, ջա՛ն ա՛յ,
Զի՛լ հնչի թող նրա ձայն:

Մինչ ուրախ մեր սիրտն ու միտք
Մարշը մեր թունդ ու թինդ,
Մենք իրար թեւ ու թիկունք,
Մենք իրար սեր ու խինդ.

Ջա՛ն ա՛յ, ջա՛ն ա՛յ,
Մենք իրար սեր ու խինդ:

## 26.
# ՄԵՆՔ ՈՒՆԵՆՔ ԴՐՈՇ

Երաժշտությունը
Մ. Կրասևի






# ԽԻԶԱԽ ՄԵՆՔ ԶԻՆԻՈՐՆԵՐ

Մէ՛կ ե՛րկու ձա՛խը, մէ՛կ ե՛րկու ձա՛խը...
Խիզախ մենք զինուորներ ենք,
Յառաջ կերթանք անվախ,
Կայտառ մենք մանկիկներ ենք
Երգել գիտենք ուրախ—հէ՜յ:

Մէ՛կ ե՛րկու ձա՛խը, մէ՛կ ե՛րկու ձա՛խը...
Հայրերը հիմք դրին մեր
Հսկա Նոր Պետութեան,
Ուր տէր են ջահել ու ծեր,
Պաշտպան մեծ Միութեան—հէ՜յ:

Մէ՛կ ե՛րկու ձա՛խը, մէ՛կ ե՛րկու ձա՛խը...
Թո՛ղ, թո՛ղ, ամենքն իմանան
Լոզունգը մեր կեանքի—
Կեցցէ հզօր Կոմմունան —
Ազատ աշխատանքի—հէ՜յ:

Մէ՛կ ե՛րկու ձա՛խը, մէ՛կ ե՛րկու ձա՛խը...

## 27.
# ԽԻԶԱԽ ՄԵՆՔ ԶԻՆՎՈՐՆԵՐ

*Երաժշտությունը*
*Ս. Կլյաչկոյի*






# ՀՈԿՏԵՄԲԵՐԻԿՆԵՐ

*Մենք ուրախ, առույգ մանկիկ ենք*
*Ժիր, աշխույժ հոկտեմբերիկ ենք,*
*Չենք սիրում խոսքեր նստած —*
*— Հե՛յ պատրա՛ստ, դո՛ւ,*
*«Միշտ պատրաստ»:*

*Մենք ճորտ չենք, ոչ էլ աղա ենք,*
*Մենք կոմմուն ընկեր—տղա ենք,*
*Եւ կոմմունն է մեր ուժեղ —*
*Կարգ կանոն կա ամեն տեղ:*

*Թող գլոնա մեր կուռ ջոկատը,*
*Մեր շարքեր մտնող անհատը,*
*Մեր միջին չկան պղերգ —*
*Փուչ, անպէտք, պարապ տղերք:*

*Մենք ուրախ առույգ մանկիկ ենք,*
*Ժիր աշխույժ հոկտեմբերիկ ենք,*
*Չենք սիրում խոսքեր նստած —*
*— Հե՛յ պատրա՛ստ, դո՛ւ,*
*«Միշտ պատրաստ»:*

28.

# ՀՈԿՏԵՄԲԵՐԻԿՆԵՐ

Երաժշտությունը
Մ. Ռաուխվերգերի






29.

# ԿԱՐՄԻՐ ՁԻՆՈՒՈՐ

Խօսք Վ. Խաչատրեանի
Երաժշտ. Գր. Աւէնի.

Աշխոյժ.



# ՄԱՆԱԾ ԹԻԼԸՍ

## (ԳԵՂՋԿՈՒՀՈՒ ԲՈՂՈՔԸ)

Մինա Բաշու Երգածէն (1895 թ. Շոշի Գիւղ՝ Ղարաբաղ)

*Մանած թիլըս (1) հաստ եկաւ,*
*Վար ու ցանքըս նէստ (2) եկաւ,*
*Կարճ ձեռքիս, բէրակ (3) մէջքիս*
*Ի՞նչ զուլում ար (4) ռաստ (4) եկաւ...*
*Սեւ քաշերը (6) տոն (7) ընգին,(8)*
*Լէշ տեսին երրա (9) պըրծին,(10)*
*Ա՜խ, երրա պըրծին...*
*Բէգխան՝ (11) եղը, բաղն՝ (12) Չծը (13),*
*Խարջի, (14) պարտքի տեղ տարին.*
*Խարջի, պարտքի տեղ տարին:*

*Եօրղան, տէօշակ՝ դէրն (15) առաւ,*
*«էս խըչհամփիւր» (16) խաչ արաւ.*
*Դիւքա՛նչին (17) էլ մէջ մտաւ,*
*Տոն, տեղ լոխ (18) սրրեց տարաւ:*
*Տոնը պըրիչակ (19) — հա՛ր (20) չը կա,*
*Ա՜խ, վա՜խ, տա՛ր չը կա...*
*Անտէր (21) խոխա (22) – տա՛ր (23) չը կա,*
*Եղն ու կլւթա՛ն, (24) վրէր (25) չը կան.*
*Սոված փորին ճար չը կա.*
*Սոված փորին ճար չը կա:*

1. Թելս, 2. ձախող, 3. բարակ, 4. էր, 5. հանդիպում, 6. ագռաւները, 7. տուն, 8. ընկան, 9. վրա, 10. յարձակւեցան, 11. տանուտէրը, 12. բէկը, 13. այծը, 14. հարկը, 15. տէրտէրը (քահանան), 16. խաչահամբոյր, 17. խանութպան, 18. ամէնը, 19. աւերակ, 20. հայր, 21. անպաշտպան, 22. երեխա (տղա), 23. տէր, 24. գութան, 25. որ:



30.

# ՄԱՆԱԾ ԹԻԼԸՍ










# ՉԵՄ, ՉԵՄ

Մշակեց Գր. Սիւնի

ՉԱՓԱՒՈՐ. ՆԱԶԱՆՔՈՎ







32.

## ՑՈՐԵՆ ԵՄ ՑԱՆԵՐ

Երաժշտ. Գր. Սինիի.



33.

## ՔԵՐՈՒՆ ԵԿԱՒ

Մշակեցին Գ. Սինի և Յ. Սամուէլեան.



## 34. ՇՈՂԵՐ ՋԱՆ

ԱՇԽՈՅԺ. դաշնաւորեց Գ. Սիւնի.




Ամպելա տուն չի գալիս, Շողեր ջան,
Մրթնելա տուն չի գալիս, Շողեր ջան,
Դուն շորորա, դուն օրօրա, Շողեր ջան,
Ամպի տակին ձին կ'երեւա, Շողեր ջան:
Ինձի համար լուսնակ ես, Շողեր ջան,
Եաղուդից թանգ դուն ակ ես, Շողեր ջան.
Դուն շորորա, եւայլն:

## 35. Օ՛Յ ՆԱԶԱՆԵՄ

Մշակեց Գր. Սիւնի

ԱՇԽՈՅԺ.



## Օ՛Յ ՆԱԶԱՆԸՄ

Օ՛յ Նազանըմ, Նազանըմ,
Գիւլ Նազանըմ, Նազանըմ,

Եար ջան, դուն բարով եկար,
Կանաչ դաշտերով եկար,
Կարմիր սոլերով եկար:

Գարնան սիրուն ծաղիկ ես,
Օ՛յ Նազանըմ, Նազանըմ,
Ինձ համար աղունիկ ես,
Գիւլ Նազանըմ, Նազօ ջան,

Եարջան դուն բարով եկար, եւայլն.

Գըլխիս վըրով պըտիտ տուր,
Օ՛յ Նազանըմ, Նազանըմ,
Նախշուն թեւ թիթեռնիկ ես,
Գիւլ Նազանըմ, Նազօ ջան.

Եար ջան, եւայլն...

Ճամպա տըւէք առաջ գամ, օ՛յ,
Սիրած եարիս բարեւ տամ...

Ուխտ եմ արել, որ առնեմ...
Թող տեսնի աշխարհ ալամ...

Նըշի ծառին նուշ կըլնի...
Վարդի հոտն անուշ կըլնի...

Երանէկ էն աղջըկան...
Սիրած եարին թուշ կըլնի...



## 36· ԿԵԱՆՔՆ ԱՆՈՒՇ

Գր.Սիւնի








## ԿԵԱՆՔՆ ԱՆՈ՛ՒՇ

Ամպն է երկինք հովն անո՛ւշ,
Ծառ ու ծաղիկ թովն անո՛ւշ...
Մարմանդներու մովն անո՛ւշ,
Մեր արտերու ծովն անո՛ւշ:

Մշակներու քէլքն անո՛ւշ,
Կուռ շարքերու փէլքն անո՛ւշ...
Աշխատանքի երգն անո՛ւշ,
Համայնավար ձեռքն անո՛ւշ:

Գալիս փխրուց կեանքն անո՛ւշ,
Մէջը տըռուզ հասկն անո՛ւշ...
Սէր, ժըպիտ, յոյզ, բերքն անո՛ւշ,
Վառ արեւոյս կարգն անո՛ւշ:—

## 37· ԻՆՋՈՒ ԲԻՆԳԵՕԼԸ ՄՏԱՐ

Աշխոյժ

Մշակեց Գր. Սինի








## ԻՆՉՈ՞Ի ԲԻՆԳԵՕԼԸ ՄՏԱՐ

Ինչո՞ւ Բինգէօլը մտար,
    Դըլէ մկոնգէ,
Բաղի բըլբուլը գըտար,
    Ափոն Թըլխկոնաէ,
Թըլխկոն, Թըլխկոն, Թըլխկոնգէ,
Ափոն կոնգէ, Թըլխկոնգէ,
Դըլէ մըկոնգէ,
Ափոն Թըլխկոնգէ.
    Սուսամ սըմբուլ,
Ինչո՞ւ Բինգէօլը մտար,
    Դըլէ մկոնգէ,
    Ափոն Թըլխկոնգէ:

Ինչո՞ւ Կարոյին տուար,
    Դըլէ մկոնգէ,
Անտէր ու գերի դասար,
    Ափոն Թըլխկոնաէ,
Թըլխկոն, Թըլխկոն, Թըլխկոնդէ,
Ափոն կոնգէ, Թըլխկոնդէ,
Դըլէ մըկոնգէ,
Ափոն Թըլխկոնգէ.
    Սուսամ սըմբուլ,
Ինչո՞ւ Կարոյին տուար,
    Դըրլէ մկոնգէ,
    Ափոն Թըրխկոնդէ:



ՀՀ Ազգային գրադարան
NL0518064

ԳԻՆ՝ 50 ՍԵՆԹ

Սրիւեան Տպարան – Նիւ Եորք